ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 մայիսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

65
(2731)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՍՏՈՒԳՈՒՄ ԵՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ պետական պաշտոնյաների, մասնավորապես՝ ՀՀ վարչապետի, փոխվարչապետի, նախարարների անունից դիմումներ են ուղարկվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, քանի որ նրանց կողմից ներկայացված տարեկան հայտարարագրերում լուրջ խախտումներ են հայտնաբերվել: Հանձնաժողովը պարզաբանումներ է պահանջել պաշտոնյաների հայտարարագրերում առկա անճշտությունների մասով, եւ հիմա սկսել է գնահատել պաշտոնյաների ներկայացրած պարզաբանումները:

Հիշեցնենք, որ դեռեւս 2022 թվականի նոյեմբերի 22-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը դիմում է ներկայացրել ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, որպեսզի նրանց օպերատիվ հետախուզական խումբը ստուգի բոլոր պետական պաշտոնյաների գույքը եւ պարզի՝ օրինակ՝ նրանք ունեն արդյոք բիզնես, անշարժ կամ շարժական գույք, որը չեն հայտարարագրել, կամ արդյոք վարում են մի մեքենա, որը հայտարարագրում ներկայացված չէ:

Եւ, ահա, ԱԱԾ-ի հետ համատեղ աշխատանքի ընթացքում բացահայտված անճշտություններն ու թաքցված նվերները դարձել են խնդիր պետական մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների համար: Իհարկե, նրանք ինչ-ինչ բացատրություններ տվել են, բայց թե որքանով են հիմնավոր բացատրությունները, ցույց կտա ժամանակը:

Իսկ ի՞նչ բնույթի խախտումների մասին է խոսքը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ օրինակ՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ներկայացրած դիմումի մեջ առկա պարզաբանումներից մեկը վերաբերում է նրա ձեռքի ժամացույցին: Նա կրում է թանկարժեք ժամացույց՝ AWI ապրանքանիշից, սակայն չի հայտարարագրել: Հավելենք, որ վարչապետը ստանում է 1 մլն 580 հազար դրամ: Նա հագնում է թանկարժեք կոստյումներ, նրա կինը կրում է թանկարժեք զարդեր, սակայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը մի AWI ժամացույցն է մատնանշել միայն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ապրիլի 28-ից ադրբեջանական կողմը արգելել է առողջական ծանր վիճակում գտնվող քաղաքացիների տեղափոխումը Արցախից Հայաստան, անգամ՝ Կարմիր խաչի միջնորդությամբ: Մեր տեղեկություններով՝ արգելվել է նաեւ ցանկացած տեսակի ապրանքի ներմուծումն Արցախ: «Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով մեկնաբանություն խնդրեց Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանից: «Ես չեմ կարող հստակ ասել, պետք է պատկան մարմիններից ճշտել, բայց այն, որ, այսպես կոչված, անցակետը կամ ձերբակալման կետը տեղադրելուց հետո իրավիճակը բարդացել է, դա միանշանակ է: Անցակետի տեղադրումը լրիվ այլ իրավիճակ է ստեղծել. փաստորեն, դրանից հետո Արցախն ամբողջությամբ պաշարման մեջ է »,- մեզ հետ զրույցում ասաց Բաբայանը: Արցախի ընդդիմադիր պատգամավոր Մետաքսե Հակոբյանն էլ հաստատեց մեր տեղեկությունը. «Ավելի շատ դրա մասին տեղեկացված են իշխանությունները, որոնք մեզ ոչինչ չեն ասում, բայց ակնհայտ է, որ ապրիլի 28-ից սկսած՝ Կարմիր խաչն իր առաքելությունը չի կատարում, հիվանդներ չեն տեղափոխվում Արցախից Հայաստան, ընտանիքների միավորում եւս չի կատարվում: Առավել քան ակնհայտ է, որ նման տեսակի բոլոր գործառույթները դադարեցված են: Կոնկրետ ապրանքատեսակների մասին տեղեկություն չունեմ, բայց, որ ամենակարեւորն է, աղողջական խնդիր ունեցող մարդկանց տեղափոխում չի իրականացվում»,-ասաց նա:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Արաբկիր վարչական շրջանի նախկին ղեկավար Հովհաննես Շահինյանի քրեական վարույթով անցնում է նաեւ Երեւանի նախկին քաղաքապետ Երվանդ Զախարյանը: Մեզ հայտնի դարձավ, որ նրա դեմ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳՎ վարչությունում հարուցվել է հանրային քրեական հետապնդում: Ինչպես Հովհաննես Շահինյանն էր հայտնել, ոստիկանության Երեւան քաղաքի գլխավոր վարչության մի խումբ աշխատակիցներ այցելել են իր ծնողների բնակարան, որպեսզի, քննիչի որոշման համաձայն, ձերբակալեն Շահինյանին, թեեւ վերջինս արդեն տեւական ժամանակ է՝ բացակայում է երկրից: Նշենք, որ Հովհաննես Շահինյանին ձերբակալելու որոշում է կայացվել նրան հետագայում կալանավորման տանելու նպատակով, բայց կալանքի միջնորդությունը դատարանը մերժել է: Մեղադրանքը փողերի լվացման հոդվածով է, ձերբակալության նպատակն ազատության մեջ գտնվող մեղադրյալին կալանավորման ներկայացնելն է, որը Հակակոռուպցիոն դատարանի կողմից մերժվել է, կալանավորման որոշում չի կայացվել:

Այս օրերին կրկին ակտիվորեն նշվում է այն մասին, որ ՀՀ-ն բարելավել է իր դիրքերը Մամուլի ազատության ինդեքսում: Մասնավորապես, հրապարակված ինդեքսում Հայաստանը, 51-րդ հորիզոնականի փոխարեն, արդեն զբաղեցնում է 49-րդ հորիզոնականը: Այս ինդեքսը ներկայացված է «Լրագրողներ՝ առանց սահմանների» կազմակերպության զեկույցում: Իհարկե, առաջին հայացքից դրական է այս ինդեքսում հորիզոնականի բարելավումը, սակայն զեկույցում իրականում մեծ թվով խնդիրներ են ներկայացված: Որպես խնդրահարույց կետ՝ նշվում է այն հանգամանքը, որ պետական լրատվամիջոցները զերծ են մնում կառավարության հասցեին որեւէ քննադատությունից, մյուս կողմից՝ ատելության խոսքի մեծ չափաբաժնի մասին է նշված: Զեկույցում նշվում է, որ Հայաստանում լրագրողները մշտապես վիրավորանքների, հարձակման ու հետապնդման են ենթարկվում զրպարտության համար, լրագրողների նկատմամբ բռնությունն անպատիժ է մնում:

ԴԱՎ Է ԵՂԵԼ

ՄԵՆՔ ՉԵՆՔ ՊԱՐՏՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը 44-օրյա պատերազմից հետո բանակում ստեղծված իրավիճակի վերաբերյալ զրուցել է «Արաբո» ջոկատի հրամանատար, ազատամարտիկ Մանվել Եղիազարյանի հետ:

-Պարոն Եղիազարյան, տպավորություն է, որ այսօր արվում է ամեն ինչ մեր բանակի մարտական ոգին թուլացնելու, բանակը թիրախավորելու համար. ի՞նչ կասեք այս մասին: Ձեր դիտարկմամբ՝ ի՞նչ վճակում է այսօր մեր բանակը:

-Այո՛, դա այպես է, քանի որ իշխանության են եկել մարդիկ, որոնք իրենց բարեմասնություններին են սիրահարված. նրանց պետք չէ, որ հայերին պաշտպանեն: Երկիրը պետք է այնպիսի մարդիկ ղեկավարեն, որոնք ոչ թե հացի համար կպայքարեն, այլ պատվի: Սրանք ամեն ինչ անում են, որ Հայաստանը դառնա ոտքի կոխան. եթե հները թալանում էին երկիրը, սրանք հիմա ամեն ինչ անում են, որ դառնանք անպաշտպան ազգ: Մենք ամենալավ զինվորներն ունենք, մենք երբեք մեր հաղթանակների մասին չենք բարձրաձայնել, մատնացույց չենք արել դրանք: Մի՛ մոռացեք, որ նախկինում հայոց այրուձին էին տանում այստեղ ու այնտեղ կռվելու համար, քանի որ իսկական զինվորներ ենք ունեցել, իսկ հիմա զինվորներին օտարացրել են մեզնից: Մոռանալով անցյալը՝դու նորը չես կառուցի. միայն մարդը, որը սիրահարված է իր բարեմասնություններին, կարող է անցյալը մոռանալ:

-Իշխանության ներկայացուցիչները հայտարարում են, որ 44-օրյա պատերազմում մեր պարտության հիմնական պատճառն այն է եղել, որ մեր զինվորները չեն կռվել. դասալիքներ ենք ունեցել: Դուք ի՞նչ կասեք, ի վերջո, ո՞րն էր պատերազմում պարտության պատճառը:

-Մենք պարտություն չենք կրել, սուտ են ասում, թե մենք պարտվել ենք, այդպես չէ. հայ տղամարդը պատերազմի ժամանակ իր իրական պատկերը ցույց է տվել: Պատերազմի 44 օրվա ընթացքում մենք այդքան զոհեր ու վիրավորներ ենք ունեցել, այդքան մարդ մարտի դաշտում զոհվել է, ոչ մեկը բարձրաձայն չի ասում այս մասին, քանի որ չեն ցանկանում բացահայտվի այն դավաճանությունը, որը եղել է պատերազմի ժամանակ: Բարդում են հայ տղամարդու վրա. չի՛ եղել պարտություն, մոռացե՛ք, եղել է դավ, իսկ այդ դավը նոր չի սկսվել, սկսվել է 1992թ.-ից, երբ Հայաստանը եւ Արցախը թալանել են, մարդկանց արհամարհել են: Հիմա այն վիճակն է, որը մենք զգացել ենք Եղեռնից հետո. սա մեր երկրորդ Եղեռնն է: Այդքան հաղթանակներից հետո այսօր այս վիճակին ենք, քանի որ մեր հաղթանակը չփայփայեցինք, ամեն ինչ թողեցինք բախտի քմահաճույքին, արդյունքում ունեցանք այս վիճակը: Այսօր Հայաստանում նորից Եղեռն է, որը եղել է 100 տարի առաջ:

-Պարոն Եղիազարյան, առաջիկայում նոր հաղթանակներ կտոնե՞նք: Ի՞նչ պետք է անենք նորանոր հաղթանակներ գրանցելու համար:

-Առաջիկայում եթե կարողանանք տոկուն լինել, այս վիճակից դուրս գալ, կարող ենք ավելի մեծ հաղթանակներ տոնել: Ամենակարեւորն այն է, որ հրամանատարը զորքը ղեկավարի, ոչ թե պատահական մարդ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿԱՐԾԻՔ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՉԻ ՆԵՐՈՒՄ ՌՈՒՍՆԵՐԻՆ

«Քաղաքական շահերի տեսանկյունից կատարյալ տգիտություն է արտաքին վեկտոր փոխելը. հեռանալ Մոսկվայից նշանակում է մտերմանալ Անկարայի հետ»,- մայիսի 9-ին լրագրողների հետ զրույցում ասաց Հայաստանի հանրապետական կուսակցության խոսնակ Էդուարդ Շարմազանովը:

«Եթե մեր ժամանակ Հայաստանը դաշնակցում էր Մոսկվայի հետ, ապա Նիկոլի ժամանակ մտնում է Անկարայի տակ: Եթե խաղաղապահները չլինեին Ստեփանակերտում, այն կլիներ Խանքենդի: Նիկոլ Փաշինյանը եւ իր թուրքադրբեջանական հովանավորները չեն ներում ռուսներին, որ Շուշին Շուշա դարձրին, բայց Ստեփանակերտը Խանքենդի՝ ոչ: Հայաստանի ապագան Ռուսաստանի եւ Իրանի հետ դաշնակցությունն է, բայց ոչ Նիկոլ Փաշինյանի դեպքում, որովհետեւ չեն դաշնակցում մեկի հետ, որն առավոտյան գնում է Վաշինգտոն, ցերեկը՝ Պրահա, երեկոյան՝ Մոսկվա: Օգնում են նրան, ով ուզում է ծնկած վիճակից ոտքի կանգնել»- ասաց Շարմազանովը:

Անդրադառնալով ԵԿՄ նախագահ Սասուն Միքայելյանի հայտարարությանը, թե Շուշին պետք է ազատագրել գործով, ոչ թե խոսքերով, Շարմազանովն ասաց, որ Շուշին ազատագրել են Վազգեն Սարգսյանը, Սերժ Սարգսյանը, Ռոբերտ Քոչարյանը, Նիկոլ Փաշինյանն էլ հանձնել է:

«Հիմա Սասուն Միքայելյանն ո՞ւմ կողքին է: Իրենք խոսում են դավաճանությունից, բայց Շուշին հանձնել են իրենք, երբ որ չեն համաձայնել Պուտինի՝ հոկտեմբերի 19-ի առաջարկին, երբ որ հասարակությանը բաժանել են սեւերի եւ սպիտակների, երբ որ կազմաքանդել են հայոց բանակը: Քանի դեռ կա այս կապիտուլյանտ իշխանությունը, մենք խնդիր ունենք եղածը պահելու: Ոչ մի լավ բանի պետք չէ սպասել իրենցից: Ի՞նչ սպասել մեկից, որ ուղեղում միայն զիջելն է. ինքը զիջելու է մինչեւ իր աթոռը: Կանգառը կլինի այն ժամանակ, երբ ժողովուրդը հասկանա, որ փրկությունը Նիկոլից ազատվելու մեջ է»,- ընդգծեց նա:

ԱՅԼԵՎՍ ՉԻ ՏՊԱԳՐՎԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Արմենպրես» լրատվական գործակալության կողմից հրատարակվող «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը հաջորդ ամսվանից այլեւս դադարելու է լույս տեսնել, քանի որ դադարեցվել է օրաթերթի ֆինանսավորումը, եւ կրճատվել է նաեւ աշխատակիցների թիվը: Մեր տեղեկություններով՝ օրաթերթի ֆինանսավորումը դադարեցնելու որոշում կայացվել է հենց Նիկոլ Փաշինյանի կողմից:

Ո՞րն է ֆինանսավորումը դադարեցնելու պատճառը. մեր աղբյուրներից տեղեկացանք, որ օրաթերթի աշխատակազմը դեմ է արտահայտվել Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականությանը, վերջինս էլ որոշել է դադարեցնել ֆինանսավորումը, որպեսզի այն այլեւս լույս չտեսնի:

«Ժողովուրդ» օրաթերթին «Արմենպրես» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր Նարինե Նազարյանը հայտնեց. ««Արմենպրես» պետական լրատվական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջ լիազոր ներկայացուցիչների ընդհանուր ժողովի որոշմամբ՝ 2023թ. հունիսի 1-ից կդադարեցվի «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի եւ «Ռեսպուբլիկա Արմենիա» ռուսալեզու թերթի տպագրությունը:

Որոշումը պայմանավորված է թերթերի՝ 2022թ. ֆինանսական ցուցանիշների ամփոփ հաշվարկով եւ ծախսարդյունավետության նվազ մակարդակով:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը եւ «Ռեսպուբլիկա Արմենիա» ռուսալեզու թերթը 2017 թվականից գործում են ««Արմենպրես» պետական լրատվական գործակալություն» ՓԲԸ կազմում, որի բաժնետոմսերը տնօրինում է Հայաստանի Հանրապետությունը»:

Նշենք, որ «Հայաստանի Հանրապետություն»-ը Հայաստանում լույս տեսնող պաշտոնական թերթ է, որը հրապարակվում է դեռեւս 1990թ.-ից:

ԿՐՔԵՐԸ ՉԵՆ ԴԱԴԱՐՈՒՄ

«ՄԼ Մայնինգ» ընկերության շուրջ բորբոքված կրքերը չեն դադարում: Նախ՝հիշեցնենք, որ այս ընկերությունը փոխկապակցված է ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի նախկին ղեկավար Դավիթ Սուքիասյանի հետ: Բանն այն է, որ այս ընկերությունը լուրջ խնդիրների առջեւ է կանգնեցրել Հակակոռուպցիոն դատարանի աշխատակիցներին: Մասնավորապես, «ՄԼ Մայնինգ» ընկերության գրասենյակը գտնվում է Հակակոռուպցիոն կոմիտեի հարեւանությամբ, ընկերության մեքենաները, այդ թվում՝ բեռնատարները, երթեւեկելիս վնասում են ճանապարհները, որն էլ հետո դժվարացնում է այդ ճանապարհով այլ մեքենաների երթեւեկությունը: «Ժողովուրդ» օրաթերթի կողմից արված կադրերում եւս երեւում է, որ ճանապարհին քարեր են, այն դժվարանցանելի է, եւ պատճառն էլ հենց այս ընկերության շինարարական գործընթացին մասնակից մեքենաներն են: «ՄԼ մայնինգ» ընկերության շուրջ դժգոհությունները բազմաթիվ են եւ միայն սրանով չեն սահմանափակվում: Պարբերաբար «Ժողովուրդ» օրաթերթը կանդրադառնա այս ընկերության գործունեությանն ու առկա դժգոհություններին:

ԳԻՏԱԿՑՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Արդեն մի քանի օր է՝ շարունակվում է Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության ու հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի նախաձեռնած «Ո՛չ Արցախի էթնիկ զտմանը» ստորագրահավաքը:

Երեկ լրագրողների հետ զրույցում Թագուհի Թովմասյանը հայտնեց, որ արդեն 150.000-ից ավել ստորագրություն հավաքվել է, իսկ ստորագրահավաքի արդյունքները ներկայացնելու է միջազգային տարբեր կազմակերպությունների. «Քաղաքացիները մտահոգված են Արցախի ճակատագրով. մարդիկ կան, որ գալիս են, մեքենան կանգնեցնում, ստորագրում, հետո նորից հետ գնում, կա՝ գալիս են տրանսպորտով, ասում են՝ շուտ ստորագրեմ, որ նույն տրանսպորտով հետ եմ գնալու: Սա գիտակցված ընտրություն է: Ինչքան շատ ստորագրություն հավաքենք, այնքան միջազգային ատյաններում մեր դիրքերը կամրանան»:

ՇՈՒՇԻԻ ԳՈՐԳԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Շուշիի գորգերի թանգարանի եւ «Արցախկարպետի» գորգերը երեկ Երեւանի կենտրոնում էին: Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի նախաձեռնությամբ երեկ Շառլ Ազնավուրի հրապարակում Շուշիի գորգերի թանգարանի եւ «Արցախկարպետի» գորգերի ցուցադրություն է կազմակերպվել: Արցախից բերված գորգերը տեսնելու համար բազմաթիվ քաղաքացիներ էին եկել:

Շուշիի գորգերի թանգարանի հիմնադիր Վարդան Ասծատրյանը եւս մասնակցում էր միջոցառմանը:

«Մոսկվա» կինոթատրոնի հարեւանությամբ շարունակվում է նաեւ Թագուհի Թովմասյանի նախաձեռնած ստորագրահավաքը՝ հանուն Արցախի:

ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԻՐԱՎԻՃԱԿ Է

Մայիսի 9-ը եռատոն է՝ Մեծ հայրենականում հաղթանակի, Շուշիի ազատագրման եւ Արցախի բանակի ստեղծման օրը: Մեծ հայրենականում տարած հաղթանակը եւ Շուշիի ազատագրումը հայ ժողովրդի մեծագույն հաղթանակներն են: ՀՀ մի շարք բարձրաստիճան պաշտոնյաները, իշխանական եւ ընդդիմադիր պատգամավորները երեկ այցելել են «Հաղթանակ» զբոսայգի եւ հարգանքի տուրք մատուցել հանուն հայրենիքի նահատակված հերոսների հիշատակին: Իսկ թե ինչպես են երեկ նշել մայիսյան հաղթանակի տոներն Արցախում, Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանը նշեց՝ քանի որ այս տարի յուրահատուկ իրավիճակ է, առանձին միջոցառումներ չեն կազմակերպվել: «Յուրահատուկ իրավիճակ է ստեղծվել, բայց պետք է պինդ լինենք, չհուսահատվենք, քանի որ թշնամու նպատակը հենց դա է՝ մեզ հուսահատեցնել, որպեսզի գաղափարապես մեզ հաղթեն, քանի որ ֆիզիկականը խնդիր չէ: Մենք պետք է սա հասկանանք: Առանձին միջոցառումն այն է, որ մարդիկ այցելել են Ստեփանակերտի հուշահամալիր, հարգանքի տուրք մատուցել հանուն հայրենիքի նահատակված հերոսների հիշատակին, ծաղիկներ են խոնարհել»,- ասաց Բաբայանը:

ՏԱՐԲԵՐ

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների՝ Վաշինգտոնում տեղի ունեցած բանակցություններից հետո այս շաբաթվա վերջին Բրյուսելում կհանդիպեն Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարներ Նիկոլ Փաշինյանն ու Իլհամ Ալիեւը եռակողմ ձեւաչափով: Եվրոպական խորհրդի նախագահի գրասենյակն է այս տեղեկությունը տարածել, սակայն առանց հստակեցնելու, թե կոնկրետ ինչ հարցերի շուրջ են ընթանալու Շառլ Միշելի միջնորդությամբ բանակցությունները:

«Նախագահ Միշելը շարունակում է սերտ կապի մեջ լինել Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների հետ Հարավային Կովկասում կայունությունը խթանելու եւ երկու երկրների միջեւ հարաբերությունների կարգավորմանն ուղղված Եվրամիության ջանքերն առաջ մղելու համար», - այս մասին հայտնել են եվրոպական կառույցից: Նաեւ տեղեկացրել են, որ արդեն կա պայմանավորվածություն հունիսի 1-ին նաեւ հնգակողմ հանդիպում անցկացնել՝ Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի եւ Ֆրանսիայի նախագահ Էմանյուել Մակրոնի մասնակցությամբ Մոլդովայում Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի շրջանակում:

Միշելը նաեւ մտադրություն է հայտնել հրավիրել Հայաստանի, Ադրբեջանի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի առաջնորդներին երկրորդ հանդիպումն անցկացնել արդեն հոկտեմբերին Իսպանիայում Եվրոպական քաղաքական համայնքի հաջորդ հավաքի շրջանակում: «Միշելը, Փաշինյանը եւ Ալիեւը նաեւ պայմանավորվել են շարունակել եռակողմ հանդիպումները Բրյուսելում այնքան հաճախ, որքան անհրաժեշտ է տեղում ընթացող զարգացումներին եւ բրյուսելյան հանդիպումների օրակարգային հարցերին անդրադառնալու համար», - հայտնում է Եվրոպական խորհուրդը: Երեկ հարց է հնչել, թե արդյոք Բրյուսելում շարունակվելու են վաշինգտոնյան բանակցությունները, իսկ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը նշել է. «Բոլոր հանդիպումներն էլ, կարծում եմ, ինչ վերաբերում է խաղաղության պայմանագրի բանակցություններին, միմյանց շարունակություն են, որովհետեւ հարցերը եւ հարցերի շրջանակները հայտնի են, թե ինչ հարցեր են քննարկելու»: Ամերիկյան կողմը Վաշինգտոնում կայացած բանակցությունները կառուցողական է որակում, խոսում զգալի առաջընթացի մասին, մինչդեռ Երեւանն ու Բաքուն նույնաբովանդակ աղորդագրություններով շեշտել էին առկա տարաձայնությունների մասին: Արմեն Գրիգորյանը երեկ շեշտեց՝ բանակցություններում ամենակարեւոր հարցերի շուրջ Բաքվի հետ համաձայնության հասնել չի հաջողվում: «Դա Հայաստանի Հանրապետության սուվերեն 29 հազար 800 քառակուսի կիլոմետրի արձանագրումն է, Ստեփանակերտ-Բաքու միջազգային մեխանիզմի ստեղծումն է, ինչպես նաեւ միջազգային երաշխիքի ստեղծումն է, նայեք, նույնիսկ այսօրվա իրավիճակը, նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության տարրերի պահպանումը չի հաջողվում, որովհետեւ, օրինակ, Լաչինի միջանցքը, ըստ եռակողմ հայտարարության, Ադրբեջանն այնտեղ ներկա չպետք է լինի, բայց այս պահին ներկա է», - հավելեց նա: Արմեն Գրիգորյանը վերստին հայտարարեց՝ Երեւանը կարեւորում է միջազգային երաշխավորների ինստիտուտի անհրաժեշտությունը, որ կողմերն իրենց պայմանավորվածություններին հավատարիմ մնան:

Հավելենք, որ շաբաթվա վերջին սպասվող բրյուսելյան բանակցություններից հետո կրկին եռակողմ ձեւաչափով Մոսկվայում հանդիպում կլինի: Այդ մասին էլ լրագրողների հետ զրույցում հայտնել է ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը՝ չհստակեցնելով, սակայն, առաջնորդների թե արտգործնախարարների մակարդակով: Արտգործնախարարների հաջորդ բանակցությունները, ըստ հայտարարությունների, Ռուսաստանում կանցկացվեն մայիսին, բայց օրը հայտնի չէ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՉԵՆ ԱՅՑԵԼԵԼ «ԵՌԱԲԼՈՒՐ»

Իշխանության բարձրաստիճան պաշտոնյաները Շուշիի ազատագրման 31-ամյակի առթիվ երեկ՝ մայիսի 9-ին, չեն այցելել «Եռաբլուր» զինվորական պանթեոն:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հայրենական պատերազմի հաղթանակի 78-ամյակի միջոցառումների համար այժմ Ռուսաստանի Դաշնությունում է, սակայն երեկվա ընթացքում նույնպես նա չի այցելել պանթեոն: Փաշինյանը նաեւ ավանդական ուղերձ չի հղել Շուշիի ազատագրման առթիվ:

Պանթեոն չեն այցելել նաեւ հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները:

Հավելենք, որ բարձրաստիճան պաշտոնյաները Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 78-ամյակի առթիվ այցելել էին «Հաղթանակ» զբոսայգի:

ԽՍՏԱՑՈՒՄՆԵՐԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԵՆ

ԵՄ-ն աշխատում է ՌԴ-ի դեմ պատժամիջոցների ռեժիմի խստացման ուղղությամբ. հաջորդ փաթեթը վերջինը չի լինի: Այս մասին հայտարարել է Գրեմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցը Ստրասբուրգում Եվրոպական խորհրդարանի նախագահ Ռոբերտա Մեցոլայի հետ համատեղ ասուլիսում: Հեռարձակումն իրականացրել է գերմանական N-tv հեռուստաալիքը:

Մենք արդեն պատժամիջոցների բարելավումը (ֆունկցիոնալությունը) քննարկելու ճանապարհին ենք, եւ հաջորդը վերջինը չի լինի: Սա մշտական աշխատանք է», -ասել է նա:

Մայիսի 8-ին Եվրահանձնաժողովը հայտարարեց, որ ավարտել է Ռուսաստանի դեմ պատժամիջոցների 11-րդ փաթեթի մշակումը եւ այն փոխանցել համայնքի երկրներին համաձայնեցման համար:

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Թուրքիայում պետական ծառայողների աշխատավարձը կբարձրանա 45%-ով, իսկ նվազագույն աշխատավարձը կկազմի 15000 լիրա: Այդ մասին հայտնել է Anadolu գործակալությունը: Այդ մասին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն ասել է 2023 թվականի՝ Հանրային կոլեկտիվ աշխատանքային պայմանագրի ստորագրման արարողության ժամանակ:

«Այս կոլեկտիվ պայմանագրի շրջանակներում մենք 45 տոկոսով բարձրացնում ենք աշխատավարձերը՝ ներառյալ սոցիալական ապահովության բաժինը. այսպիսով, քաղծառայողի ամենացածր աշխատավարձը կլինի 15 հազար լիրա»,- հայտնել է Էրդողանը:

ԿԵՂԾ ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐ

Ի՞ՆՉ ԵՆ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Սարգիս Բրուտյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա 2022 թվականի հոկտեմբերից մինչեւ դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում քննությամբ չպարզված հանգամանքներում իրացնելու նպատակով ձեռք է բերել թվով 20 հատ «50 ԱՄՆ դոլար» եւ «100 ԱՄՆ դոլար» անվանական արժեքով կեղծ թղթադրամներ, որոնք փոխադրել եւ կնոջ՝ Ջուլիետա Բաշիկյանի հետ խմբի կազմում պահել է իր եւ վերջինիս կողմից վարձակալած Երեւան քաղաքի Սիմոն Վրացյան 79/3 հասցեում տեղակայված բնակարանում:

Այնուհետեւ հիշյալ կեղծ արտարժույթներն իրացման նպատակով պահելու եւ դրանց իրացման միջոցով գույքային օգուտ ստանալու վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերել Ալլա Ջուրաբյանի հետ, որի շրջանակներում 2022 թվականի դեկտեմբերի 1-ին Գոռ Հովհաննիսյանը՝ «100», ապա 2022 թվականի դեկտեմբերի 2-ին երկու հատ «50 ԱՄՆ» դոլար անվանական արժեքով կեղծ թղթադրամներն իրացրել է խմբի անդամ հանդիսացող Ալլա Ջուրաբյանին՝ այն այլ անձի իրացնելու եւ գույքային օգուտ ստանալու նպատակով, որն էլ իր հերթին նշված կեղծ արտարժույթ հանդիսացող «100 ԱՄՆ» դոլար անվանական արժեքով թղթադրամը փորձել է փոխանակել տարադրամի փոխանակման սարքի միջոցով, սակայն ձախողելուց հետո այն եւ երկու հատ «50 ԱՄՆ» անվանական արժեքով կեղծ թղթադրամներն իրացրել է իր մտերիմ Սարգիս Արմենի Բրուտյանին:

Նշվածից հետո Գոռ Հովհաննիսյանի կողմից ձեռք բերված կեղծ արժույթ հանդիսացող «50 ԱՄՆ» անվանական արժեքով թղթադրամներից մեկը 2022 թվականի դեկտեմբերի 23-ին կատարված խուզարկությամբ հայտնաբերվել եւ առգրավվել է Երեւան քաղաքի Սիմոն Վրացյան 79/3 հասցեի ննջասենյակի աջ պատի վերջնամասում դրված անկյունային պահարանի վրա դրված պոլիէթիլենային տոպրակից, իսկ Ալլա Ջուրաբյանի կողմից Սարգիս Բրուտյանին իրացված երկու հատ կեղծ արտարժույթ հանդիսացող «50 ԱՄՆ դոլար» անվանական արժեքով եւ մեկ հատ «100 ԱՄՆ դոլար» անվանական արժեքով կեղծ թղթադրամները 2023 թվականի փետրվարի 25-ին առգրավվել են Սարգիս Բրուտյանից:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԹՄՐԱՆՅՈՒԹ Է ՏՎԵԼ ՊԱՊԻՆ

Մասիսի քրեական հետախույզները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Այնթապ գյուղի բնակիչ, 64-ամյա մի տղամարդ ապօրինի պահում եւ օգտագործում է թմրանյութ: Տվյալն իրացնելիս մայիսի 5-ի երեկոյան ստացվեց նոր տեղեկություն, որ թմրանյութ կա նաեւ նրա 16-ամյա թոռան մոտ:

Թոռը հայտնաբերվեց Այնթապ գյուղի նոր գերեզմանատան մոտ: Նրա պայուսակում կար Մարիխուանայի նմանվող զանգվածով փաթեթ, որը պետք է հասցներ պապին: Գերեզմանատան մոտակայքում հայտնաբերվեց նաեւ պապը: Նա ձերբակալվեց, տեղափոխվեց ոստիկանության Մասիսի բաժին եւ խոստովանեց, որ թոռան մոտ հայտնաբերված Մարիխուանան իրենն է, ինքն է խնդրել փաթեթը փոխանցել իրեն: Ըստ նրա՝ թմրամիջոցի հումք կանեփն էլ քաղել էր վայրաճ թփերից իր օգտագործման համար:

Փաստի առթիվ Մասիսի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՊԱՅԹՅՈՒՆ՝ «ՄԵՐՍԵԴԵՍՈՒՄ»

Մայիսի 9-ին՝ ժամը 03:06-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն տեղեկություն է ստացվել, որ Սյունիքի մարզային փրկարարական վարչության մոտակայքում լսվել է պայթյունի ձայն, եւ նկատվել է այրվող ավտոմեքենա: Պարզվել է, որ այրվում է Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենա (վարորդ՝ Մ. Հ.՝ծնված 1989 թ.): Հրդեհը մեկուսացվել է ժամը 03:11-ին, մարվել՝ 03:19-ին: Այրվել են ավտոմեքենայի սրահն եւ բեռնախցիկը՝ մասամբ: Հրդեհի հետեւանքով տուժած վարորդը հոսպիտալացվել է Կապան քաղաքի ԲԿ, որտեղ բժիշկները նրա առողջական վիճակը գնահատել են բավարար:

604 ԶՈՀ

Սուդանում բանակի եւ արագ արձագանքման ուժերի (հատուկ ջոկատայինների) միջեւ բախումների հետեւանքով զոհված խաղաղ բնակիչների թիվը հասել է 604-ի, վիրավորվել է ավելի քան 65 հազար մարդ: Այս մասին երեքշաբթի տեղեկացրել է Asharq հեռուստաալիքը՝ հղում կատարելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներին:

ԱՀԿ-ն մինչ այդ տեղեկացրել էր, որ բախումների զոհ է դարձել ավելի քան 450 մարդ, 4-ից ավելի մարդ վիրավորվել է:

Մայիսի 5-ին Սուդանի առողջապահության նախարարությունը գրանցել էր զինված հակամարտության սկզբից ի վեր 551-րդ զոհված խաղաղ բնակչին:

ԼՈՒՐԵՐ

Ո՞Վ Է ՄԵՂԱԴՐՅԱԼԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Մուրադ Նուրիջանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հասարակության նկատմամբ անհարգալից, իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, հայհոյանքներով եւ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ հասարակական նշանակության օբյեկտի բնականոն աշխատանքը խոչընդոտելով, հարվածներ է հասցրել «Մուրացան» հիվանդանոցի անվտանգության ծառայության աշխատակից Արսեն Արմենակի Բարսեղյանի մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 6-ին սոցցանցում եւ լրատվական կայքերում տեղեկություն էր տարածվել, թե, իբր, պարեկային ծառայության Գեղարքունիքի մարզը սպասարկող գումարտակի ծառայողներից մեկը վարորդի նկատմամբ կազմել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն «տրանսպորտային միջոցը ուժը կորցրած վարորդական վկայականով վարելու» համար այն պայմանում, երբ տվյալ վարորդի վարորդական իրավունքի վկայականը վավեր է եղել: Այս մասին պարզաբանում է տարածել ոստիկանությունը:

«Վերոգրյալի մասին հայտնում ենք, որ վարորդը պարեկային ծառայողին է ներկայացրել ոչ թե լրատվական կայքերում հրապարակված վարորդական վկայականը, այլ ժամանակավոր վարորդական վկայական, ինչը տրված է եղել 12.01.2023 թվականից մինչեւ 01.02.2023 թվականը, ինչը նաեւ երկարաձգված է եղել մինչեւ 20.03.2023 թվականը:

Տվյալ անձը մեքենան փաստացի վարել է ուժը կորցրած ժամանակավոր վարորդական իրավունքի վկայականով:

Հարկ է նաեւ նշել, որ հաշվառման-քննական ստորաբաժանման կողմից տրված ժամանակավոր վարորդական վկայականի ժամկետը լրանալուց հետո քաղաքացուն տրվում է վարորդական իրավունքի վկայական (պլաստիկ), որտեղ նշվում է ժամանակավոր վարորդական վկայականի տրման ամսաթիվը:

Եվս մեկ անգամ նշենք, որ մայիսի 5-ին՝ իրավախտումն արձանագրելու օրը, տվյալ անձի մոտ եղել է ժամանակավոր վարորդական վկայական, ինչի ժամկետը լրացած է եղել 20.03.2023 թվականին, իսկ վարորդական վկայականը նրան տրամադրվել է ՃՈ Մարտունու հաշվառման-քննական ստորաբաժանման կողմից մայիսի 6-ին՝ նրա սոցցանցում կատարած գրառման օրը:

Կոչ ենք անում լրատվամիջոցներին չհրապարակել չճշտված եւ ապակողմնորոշող տեղեկություններ, նաեւ անհարկի եւ անհիմն չվարկաբեկել ոստիկանության ծառայողին եւ նրա օրինական գործունեությունը»,-նշվում է պարզաբանման մեջ:

● Հայտնաբերվել են 1 անհետ կորած եւ 10 հետախուզվող: Կամավոր ներկայացել է 7 հետախուզվող: Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 4 դեպք:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ

Չինաստանը, ի պատասխան այն բանի, որ իր դիվանագետը վտարվել է, բողոքի նոտա է հանձնել Շանհայում Կանադայի հյուպատոսին. նա պետք է հեռանա երկրից: Այս մասին նշվել է Չինաստանի ԱԳՆ հաղորդագրությունում:

Հայտարարությունում նշվել է, որ կանադացի դիվանագետ Ջենիֆեր Լին Լալոնդը պարտավոր է հեռանալ Չինաստանից մինչեւ մայիսի 13-ը:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Կանադան անցանկալի անձ էր հայտարարել չինացի դիվանագետին՝ Տորոնտոյում Չինաստանի գլխավոր հյուպատոսության աշխատակցին, եւ վտարել էր նրան երկրից:

Կանադայի ԱԳՆ-ում հայտարարել են, որ չինացի դիվանագետը՝Չժաո Վեյը, զբաղվել է մի գործունեությամբ, որը կապված է եղել Կանադայի ներքին գործերին միջամտության հետ:

Չինաստանի դեսպանությունն իր հերթին խիստ դատապարտել է Կանադայի իշխանությունների գործողությունները: Օտտավան մեղադրվել է միջազգային իրավունքի հիմնական նորմերի խախտման եւ չին-կանադական հարաբերությունների սաբոտաժի մեջ:

Չինաստանի դեսպանությունն իր դիվանագետին վտարելը համարել է «ստոր» արարք, որը կատարվել է որոշ քաղաքական գործիչների եւ ՁԼՄ-ների հրահրած «չինական միջամտության» մասին ասեկոսեների հիման վրա:

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԱՃ՝ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ուկրաինայում եւ Սուդանում ռազմական հակամարտությունները տուբերկուլյոզով հիվանդացության աճ են առաջացրել աշխարհում. հայտնում է Associated Press-ը (AP):

Գործակալության տվյալներով՝ առանձնահատուկ խնդիր են ներկայացնում փախստականները, որոնք կարող են հիվանդությունը հասցնել Եվրոպա: Իրավիճակը կքննարկվի ՄԱԿ-ի լսումների ժամանակ:

«Կանգնեցնել տուբերկուլյոզը» գործընկերության գործադիր տնօրեն դոկտոր Լուչիկա Դիտիուն նշել է, որ Եվրոպական տարածաշրջանում ամենամեծ թվով տուբերկուլյոզով հիվանդները Ուկրաինայում են՝34,000 մարդ, ինչպես նաեւ մեծ թվով մարդիկ՝ դեղակայուն տուբերկուլյոզով:

«Ուկրաինացիներն իրականում ցույց են տալիս զարմանալի տոկունություն՝ անելով հնարավոր ամեն ինչ տուբերկուլյոզի բուժման ծառայությունների աջակցության համար... Բայց բոլորին մտահոգում է այն, որ Ուկրաինայում մարդիկ բուժում ստանալու հնարավորություն ունենան», - ասել է Դիտիուն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԱՄԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կրթության համաշխարհային համաժողովին մասնակցելու նպատակով Լոնդոն այցի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպել է Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դպրոցների հարցերով պետնախարար Նիկ Գիբի հետ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից հայտնեցին, որ հանդիպմանը մասնակցել են ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը եւ Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Վարուժան Ներսեսյանը: ՀՀ ԿԳՄՍ նախարարը շնորհակալություն է հայտնել ՄԹ դպրոցների հարցերով պետնախարարին հանդիպման համար՝կարեւորելով հայ-բրիտանական երկկողմ կապերի զագացումը կրթության ոլորտում:

Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է ՀՀ կրթական համակարգում մեկնարկած լայնածավալ փոփոխությունները՝ ընդգծելով, որ կրթության բոլոր աստիճաններն ընդգրկող բարեփոխումների շղթայում առավել դինամիկ են հանրակրթության փոփոխությունները: Նախարարը նշել է, որ ՀՀ դպրոցներում առաջիկա ուսումնական տարվանից ներդրվելու է Հանրակրթության նոր չափորոշիչը, որը մեծ պատասխանատվություն եւ հավելյալ ջանքեր է պահանջում: «Բարեփոխումների գլխավոր նպատակը կրթության որակի բարելավումն է»,- նշել է ԿԳՄՍ նախարարը:

Այս համատեքստում քննարկվել է երկկողմ համագործակցության հնարավորությունը հանրակրթական դպրոցների ուսուցիչների եւ տնօրենների մասնագիտական զարգացման, կրթության տեսչության՝ որպես վերահսկող մարմնի գործունեության բարելավման, ինչպես նաեւ գնահատման նոր մոտեցումների արդյունավետ կիրառման ուղղություններով: Անդրադարձ է եղել նաեւ արտադպրոցական ծրագրերի զարգացմանը՝ կարեւորելով համատեղ նախագծերի իրականացման հնարավորությունները: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ԼՈՒՐԵՐ

ԱՌԱՋԸՆԹԱՑ ՉՈՒՆԵՆՔ

«Հայաստանի ու Ադրբեջանի խաղաղության պայմանագրի բանակցություններում՝ ամենակարեւոր հարցերում, առաջընթաց չունենք»,- մայիսի 9-ին «Հաղթանակ» զբոսայգում լրագրողների հետ զրույցում նշեց Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը:

«Դա Հայաստանի Հանրապետության սուվերեն 29 800 քառակուսի կմ-ի արձանագրումն է, Ստեփանակերտ-Բաքու միջազգային մեխանիզմի, ինչպես նաեւ միջազգային երաշխիքների ստեղծումն է», - ասաց Գրիգորյանը:

Նրա խոսքով՝ նույնիսկ 2020թ. նոյեմբերի 9-ի փաստաթղթի տարրերի պահպանումն այսօր չի հաջողվում. «Օրինակ՝ ըստ եռակողմ հայտարարության՝ Ադրբեջանը Լաչինի միջանցքում ներկա չպետք է լինի, բայց այս պահին ներկա է: Մեզ համար շատ կարեւոր է, որպեսզի ունենանք միջազգային երաշխավորների ինստիտուտ, որով կլուծենք նման հարցերը»:

Ախ քարտուղարը նշեց, թե այս պահին բանակցությունները, ընդհանուր առմամբ, երկկողմ են. միջնորդները փորձում են օգնել, որպեսզի առաջընթաց գրանցվի. «Հայաստանի համար տարբերություն չկա, թե որ կողմում են դրանք ընթանում»:

Հարցին, թե հայկական կողմի համար արեւմտյան, թե ռուսական հարթակում են ավելի շահավետ պայմաններ եւ առաջարկներ ներկայացվում, Ախ քարտուղարը պատասխանեց. «Պայմաններ եւ առաջարկներ արեւմտյան կողմում չեն ներկայացվում: Խաղաղության պայմանագրի վերաբերյալ նախկինում ռուսական կողմն է առաջարկություններ ունեցել: Դրանք հրապարակային հայտնի են, որից մեկը վերաբերում է ԼՂ հիմնախնդրի կարգավորման հետաձգմանը: Ընդհանուր առմամբ, այս պահին բանակցությունները ավելի շատ երկկողմ են. միջնորդները փորձում են օգնել, որպեսզի առաջընթաց գրանցվի: Հայաստանի համար տարբերություն չկա, թե որտեղ են այդ բանակցություններն ընթանում: Այս պահին դեռեւս չի հաջողվում որեւէ տեղում առաջընթաց գրանցել»:

ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Դուք արդեն ծանոթացել եք պաշտոնական հայտարարություններին թե՛ ԱՄՆ-ի, թե՛ մասնակից երկրների կողմից, տեսաք, որ բոլոր ջանքերն էին գործադրվել բոլոր կողմերից հնարավորինս առաջ մղել խաղաղության օրակարգը»,- մայիսի 9-ին «Հաղթանակ» զբոսայգում լրագրողների հետ զրույցում նշեց ԱԳ փոխնախարար Պարույր Հովհաննիսյանը: «Վաշինգտոնում բանակցությունները 4 օր տեւեցին, եւ այդ առումով այն աննախադեպ էր: Արդեն իսկ դրական փաստ էր մեր փորձերը՝առաջ տանելու խաղաղության գիծը: Մյուս կողմից՝ ոչ ոք չէր ակնկալում հրաշքներ, բոլոր խնդիրների լուծում: Աշխատանքը շարունակվելու է: Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելն արդեն հայտարարել է, որ հաջորդ հանդիպումը տեղի կունենա Բրյուսելում, այնուհետեւ կշարունակվի Մոսկվայում եռակողմ ձեւաչափով»,-ասաց նա: Հարցին՝կան արդյոք հարցեր, որոնց շուրջ կողմերն ընդհանուր հայտարարի են եկել, փոխնախարարը պատասխանեց. «Հարցերը շատ են: Հիմա բարդ է առանձնացնել 1-2 հարց: Փաստը, որ բանակցությունները շարունակվում են այդպիսի ինտենսիվությամբ, արդեն լավ նշան է»:

● *Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է մարմնական վնասվածք պատճառելու, անձնական ունեցվածքի գողության եւ խուլիգանության 1-ական դեպք:*

ԱՐՁԱՆԱԳՐԵԼ ԵՆ

ՄՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆԵՐԸ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի 1.2%, իսկ 2023թ. մարտի համեմատ՝ 0.2% գնաճ:

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2023թ. ապրիլին, մարտի համեմատ, սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 0.1-0.6%-ով (գնաճի ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են Վաղարշապատ եւ Կապան քաղաքներում): Մայրաքաղաքում սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 0.1%-ով:

Հնդկացորենի գինը 2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, նվազել է 18.5%-ով, ոսպինը՝ 13.9%-ով, ալյուրինը՝ 8.4%-ով, բրնձինը՝ 6.9%-ով, ոլոռինը՝ 6.1%-ով, լոբունը՝ 3.3%-ով, մակարոնեղենինը՝ 1.9%-ով, ձավարինը՝ 1.8%-ով, հաճարինը՝ 1.7%-ով, իսկ 2023թ. մարտի համեմատ՝ համապատասխանաբար 2.3%, 2.2%, 3.2%, 1.4%, 1.9%, 0.2%, 2.1%, 0.3% եւ 0.8%-ով:

2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, հանրապետությունում արձանագրվել է հացի 1.9%, մարգարինի՝ 2.6%, թարմ կաթի՝ 5.9%, պանրի՝ 11.4% գնաճ, իսկ 2023թ. մարտի համեմատ՝ համապատասխանաբար 3.4%, 2.2%, 0.4%, 0.9% գնանկում:

Շաքարի եւ շաքարավազի ապրանքախմբում 2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, արձանագրվել է 10.7%, իսկ 2023թ. մարտի համեմատ՝ 1.5% գնանկում:

2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, գրանցվել է տավարի մսի 17.3%, գառան մսի՝ 1.3% գնաճ եւ խոզի մսի՝ 13.0% գնանկում, իսկ 2023թ. մարտի համեմատ՝ 0.2%, 0.2% եւ 1.5% գնանկում:

Ձվի գինը 2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, նվազել է 1.8%-ով, իսկ 2023թ. մարտի համեմատ՝ 1.5%-ով:

2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, արեւածաղկի բուսական յուղի գինը նվազել է 28.9%-ով, իսկ 2023թ. մարտի համեմատ՝ 5.2%-ով:

Դրան զուգընթաց, թռչնամսի գինը 2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, նվազել է 0.4%-ով, իսկ 2023թ. մարտի համեմատ՝ գրանցվել է 0.4% գնաճ:

Բանջարեղենի ապրանքախմբում 2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, արձանագրվել է 8.4% գնանկում, իսկ 2023թ. մարտի համեմատ՝ 2.6% գնաճ:

Մրգի ապրանքախմբում 2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, գներն աճել են 6.6%-ով, իսկ 2023թ. մարտի համեմատ՝ 6.3%-ով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԸ 148 ՕՐ Է՝ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՄԵՋ Է

Արցախի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը մայիսի 8-ին հայտարարություն է տարածել, որում նշվում է. «Երեք ամսից ավելի է, ինչ Ադրբեջանը խոչընդոտում է Աղավնո-Բերձոր հատվածում Հայաստանից Արցախ մտնող միակ բարձրավոլտ գծի վթարը վերացնել:

Էներգետիկ ճգնաժամը խորացնելու նպատակով Ադրբեջանը պարբերաբար խափանում էր Հայաստանից Արցախ մտնող գազատարի աշխատանքները. վերջին անջատումից արդեն անցել է 2 ամիս: Արդյունքում Սարսանգի ջրամբարի վրա կառուցված ՀԷԿ-ը էներգետիկ ճգնաճամը մեղմելու միակ տարբերակն էր, եւ ձմռանը էլեկտրաէներգիա ստանալու համար աննախադեպ շատ ջուր է բաց թողնվել ջրամբարից:

Առաջին լուսանկարում Սարսանգի ջրամբարն է մինչեւ Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակումը, իսկ երկրորդ նկարում՝ ջրամբարի ներկայիս վիճակը»:

2023 թվականի մայիսի 2-8-ն ընկած ժամանակահատվածում ՆԳՆ ԱԻ պետական ծառայության կենտրոնական ու տարածքային ստորաբաժանումների 911 ճգնաժամային կառավարման կենտրոններում գրանցվել է 1855 զանգ: Կանչերից 11-ը՝ տեխնածին, 28-ը կենցաղային բնույթի են:

ՆԳՆ ԱԻՊԾ-ից տեղեկացնում են, որ շաբաթվա ընթացքում արագ արձագանքման հատուկ ստորաբաժանման օպերատիվ խմբերը կատարել են փակված 7 դռան եւ 6 վերելակի բացում: Փրկարարների օգնությամբ 2 քաղաքացի տեղափոխվել է բուժհաստատություն:

«Օձի հայտնաբերման վերաբերյալ 1 կանչ է գրանցվել: Սողունը հայտնվել է Ասկերան քաղաքի Մյասնիկյան փողոցի բնակելի տներից մեկում: Փրկարարները հայտնաբերել եւ տեղափոխել են անվտանգ տարածք:

Հրշեջ փրկարարները շաբաթվա ընթացքում կատարել են 3 ելք: Հրդեհի բոլոր դեպքերն արձանագրվել են Ստեփանակերտ քաղաքում: Հրշեջներն իրականացրել են հրդեհաշիջման եւ համապատասխան կանխարգելիչ գործողություններ:

Մեկ շաբաթվա ընթացքում սակրավորները կատարել են 4 ելք: Հետախուզական աշխատանքների արդյունքում հանրապետության տարածքից հայտնաբերվել է շուրջ 169 միավոր տարբեր տեսակի ու տրամաչափի ռազմամթերք: Սակրավորները արձագանքում են քաղաքացիների կողմից հայտնաբերված, չպայթած զենք-զինամթերքի մասով բոլոր ահազանգերին, անհրաժեշտության դեպքում տեղում իրականացնում պայթեցման աշխատանքներ, որի մասին Տշs հաղորդագրությամբ իրազեկվում է քաղաքացիներին:

Կյանքի համար վտանգ հանդիսացող զինամթերքի հայտնաբերման մասով մեկ կանչ է գրանցվել մայիսի 6-ին: Շոշ համայնքի բնակիչը գյուղի դպրոցի մոտ գտնվող իրեն պատկանող հողատարածքում հայտնաբերել է հրթիռակասետային եւ մեկ գնդիկաբեկորային ռումբ: Նույն օրը ռազմամթերքը տեղում վնասազերծվել է:

Շուրջօրյա ծառայության ընթացքում փրկարարներն օգնություն են ցուցաբերում բնակչությանը, արձագանքում քաղաքացիների բոլոր ահազանգերին: Դրան զուգահեռ, պարբերաբար անցկացվում են մասնագիտական եւ ֆիզիկական պատրաստության դասընթացներ փրկարար ծառայողների մասնագիտական ունակությունների բարձրացման նպատակով»,- ասված է հաղորդագրության մեջ:

Գլխավոր դատախազության հանրային կապերի բաժնից հայտնում են, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը Հայաստանի սահմանը հատած երկու ադրբեջանցի զինծառայողներից մեկին՝ Ագշին Բաբիրովին, դատապարտել է 11 տարի 6 ամիս ազատազրկման:

«Դատարանի մայիսի 4-ի 2023 թվականի դատավճռով՝ Բաբիրովի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 11 տարի 6 ամիս 15 օր ժամկետով»,- հայտնեցին Գլխավոր դատախազության հանրային կապերի բաժնից: Ադրբեջանցի զինծառայողը մեղավոր է ճանաչվել սահմանն ապօրինի հատելու, պետական սահմանով հրազեն եւ ռազմամթերք ապօրինի տեղափոխելու համար: Նա ընդունել է իրեն առաջադրված մեղադրանքը:

Երկրորդ զինծառայողի՝ Հուսեյն Ախունդովի քրեական քննությունը շարունակվում է: Նա մեղադրվում է նաեւ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ի պահակին սպանելու համար:

Երեկ Արցախի ԱԳՆ-ն հայտարարություն է տարածել Ադրբեջանի հրահրած վերահաս բնապահպանական աղետի վերաբերյալ՝ անհրաժեշտ համարելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անհապաղ եւ վճռական միջամտությունը՝ թույլ չտալու մարդու իրավունքների զանգվածային ու կանոնավոր խախտումների շարունակումն Արցախում եւ կասեցնելու Ադրբեջանի հանցավոր ծրագրերն ու ցեղասպան մտադրությունները:

Հայտարարության մեջ ասվում է. «Գրեթե 5 ամիս է, ինչ շարունակվում է Արցախի Հանրապետության պաշարումը, որն ուղեկցվում է տրանսպորտային եւ էներգետիկ ապօրինի շրջափակմամբ եւ հանդիսանում է Ադրբեջանի կողմից պետական մակարդակով համակարգված ու հետեւողականորեն իրականացվող էթնիկ զտումների քաղաքականության հիմնական գործիքներից մեկը: Այս քաղաքականության շրջանակներում ադրբեջանական կողմը փորձում է ոչ միայն անտանելի սոցիալ-տնտեսական պայմաններ ստեղծել, այլ նաեւ արհեստականորեն հրահրել բնապահպանական աղետ եւ խարխլել Արցախի կայուն զարգացման հիմքերը:

Մասնավորապես, ադրբեջանական կողմը խոչընդոտում է Հայաստանից Արցախ մտնող միակ բարձրավոլտ հոսանքագծի վթարի վերացումն Աղավնո-Բերձոր հատվածում: Էներգետիկ ճգնաժամը խորացնելու նպատակով ադրբեջանական կողմը կանոնավոր կերպով խափանել է նաեւ Հայաստանից Արցախ մտնող գազատարի աշխատանքը: Վերջին անջատումից արդեն 2 ամիս է անցել: Արդյունքում Սարսանգի ջրամբարի վրա գտնվող հիդրոէլեկտրակայանը դարձավ էներգետիկ ճգնաժամը մեղմելու միակ հնարավորությունը, սակայն ադրբեջանական իշխանությունների՝ պաշարման եւ էներգետիկ շրջափակման չդադարող քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ ցրտաշունչ ձմռան ընթացքում Արցախի պաշարված բնակչության համար անհրաժեշտ էլեկտրաէներգիա արտադրելու նպատակով ջրամբարից բաց թողնվեց աննախադեպ քանակությամբ ջուր:

Արցախի իշխանությունները բազմիցս միջազգային հանրության ուշադրություն են հրավիրել այն փաստի վրա, որ Ադրբեջանի կողմից Հայաստանից Արցախ բնական գազի եւ էլեկտրաէներգիայի մատակարարման միտումնավոր արգելափակման շարունակումը կհանգեցնի աղետալի հետեւանքների, մասնավորապես՝ Սարսանգի ջրամբարի համար, որը քաղցրահամ ջրի ամենախոշոր ու կենսական նշանակություն ունեցող աղբյուրն է Արցախում: Սարսանգի ջրամբարի ցամաքումը բնապահպանական լուրջ հետեւանքներ կառաջացնի տարածաշրջանի ողջ էկոհամակարգի համար. Արցախի, ինչպես նաեւ Ադրբեջանի որոշ շրջանների բնակչությունը կզրկվի նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ ջրային ռեսուրսներից»:

«ՈՉ ԱՐՑԱԽԻ ԷԹՆԻԿ ԶՏՄԱՆԸ»

Մայիսի 9-ին Ստեփանակերտի Վերածնունդ հրապարակում տեղի ունեցավ «Ոչ Արցախի էթնիկ զտմանը» շարժման խմբի նախաձեռնությամբ կազմակերպված հանրահավաքը:

Հանրահավաքը մեկնարկեց Տերունական աղոթքով: Ներկաները լռության րոպեով հարգեցին Մեծ Հայրենական եւ արցախյան պատերազմներում նահատակվածների հիշատակը:

«Ոչ Արցախի էթնիկ զտմանը» շարժման նախաձեռնողները վերահաստատեցին իրենց պահանջներն ու պայքարելու վճռականությունը՝ ազատ ապրելու իրավունքի համար:

Այնուհետեւ ներկայացվեց օրերս նախաձեռնված ստորագրահավաքի պահանջագրի տեքստը՝ ուղղված ՄԽ համանախագահ երկրների ղեկավարներին ու ՀՀ վարչապետին:

«Արցախի Հանրապետության քաղաքացիները նրանց ուշադրությունն են հրավիրում Ադրբեջանի կողմից 2020 թվականի նոյեմբերի 9-ին կնքված հայտարարության դրույթների կոպտագույն խախտումների վրա: Ադրբեջանն իր գործողություններով իրականացնում է էթնիկ զտման քաղաքականություն, ժողովրդին իր հայրենիքից զրկելու ցեղասպանական գործողություններ՝ շրջափակման մեջ պահելով 120000 բնակչությանը: Մենք պահանջում ենք կիրառել բոլոր միջազգային մեխանիզմները՝ ապահովելու 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթները, ինչպես նաեւ ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանի որոշումների կատարումը»,- ասված է հայտարարության մեջ:

Ազատամարտիկ Կարմեն Ավետիսյանը, շնորհավորելով Եռատոնի առթիվ, նշեց, որ իրենց սերունդը կատարել է այն, ինչը շատերին անհնարին էր թվում:

«Հաղթանակել ենք, որովհետեւ միասնական ենք եղել: Այսօր էլ միասնության ու բռունցքվելու կարիք կա»,- ընդգծեց ազատամարտիկը:

Արցախի Հանրապետության նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանն իր խոսքում համոզմունք հայտնեց, որ հաղթանակները միշտ հիշվելու են, եւ դեռ կերտվելու են նորերը:

«Ապրիլի 23-ին Ադրբեջանը խախտեց կարմիր գծերը՝ դնելով անցակետ: Այդ կարմիր գծերի խախտումը, որպես արժանապատիվ մարդ, ստիպում է պայքարել, որովհետեւ ուրիշ տարբերակ չկա: Ոչ ոք չպիտի սահմանափակի մեր ազատ մուտքն ու ելքը դեպի Հայաստան: Մենք 149 օր շրջափակման մեջ ենք, չունենք գազ, լույս, գիտեք Սարսանգի ջրամբարի վիճակը: Ունենք մեծ խնդիրներ, բայց չենք ընկճվում: Այո, ծանր է վիճակը, բայց գիտենք մի բան՝ ոչ մի «ռեինտեգրացիայի» մասին խոսք չի կարող լինել: Մենք պաշտպանում ենք մեր տունը, քաղաքներն ու գյուղերը, գերեզմանները, մեր հողի վրա ապրելու իրավունքը: Մենք չենք ուզում ոչ մեկի վրա հարձակվել, ուզում ենք հանգիստ, երջանիկ ապրել մեր հայրենիքում: Մենք պատրաստ ենք բանակցությունների, բայց այդ բանակցությունները չեն կարող լինել՝ ատրճանակը գլխին դրած, այլ երկկողմանի հարգանքի պարագայում միայն»,-ասաց Վարդանյանը՝ Արցախի շուրջ համախմբման կոչ անելով համայն հայությանը:

Հանրահավաքին ներկա էին նաեւ Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը, երկրորդ եւ երրորդ նախագահներ Արկադի Ղուկասյանն ու Բակո Սահակյանը, Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԱՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ

ՄԻՐԶՈՅԱՆԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Էդվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական 10-րդ մրցույթին, որը մեկնարկելու է մայիսի 10-ին, կմասնակցի տասնինը հայազգի պատանի կոմպոզիտոր: Կրտսեր խմբում հանդես կգան Գագիկ Ավետիսյանը, Վիլյամ Չիլինգարյանը, Արտաշես Մոսինյանը, Հայկ Ջուլհակյանը, Արմեն Շահվերդյանը, Շավարշ Սիրեկանյանը, իսկ ավագ խմբում՝ Սյուզաննա Աղամալյանը, Արաքս Ասճյանը, Արման Աֆրիկյանը, Արսեն Գարսոյանը, Ալեքս Գեւորգյանը, Էրիկա Մարկոսյանը, Հայկ Մարտիրոսյանը, Էդգար Մխիթարյանը, Վիկտորիա Ուլիխանյանը:



Առաջին փուլը (մայիսի 10՝ ժ. 17:00, Հայաստանի կոմպոզիտորների միության համերգասրահ) կկայանա Երեւանում, իսկ երկրորդ փուլը (մայիսի 12՝ ժ. 17:00, Լ. Վ. Բեթհովենի անվան համերգասրահ) եւ գալա համերգը (մայիսի 13՝ ժ. 18:00, Լ. Վ. Բեթհովենի անվան համերգասրահ)՝ Դիլիջանում: Մշակութային-պատանեկան մրցույթների պատմության մեջ եզակի դեպք է, որ նախագիծն իրականանում է երկու քաղաքներում:

Պատանի կոմպոզիտորները հանգրվանելու են Էդվարդ Միրզոյանի անունը կրող Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տանը, ինչը կնպաստի ինչպես տոնական մթնոլորտի ձեւավորմանը, այնպես էլ կստեղծի հիանալի հնարավորություն մի քանի օր շարունակ միասին անցկացնելու հարուստ մշակութային ավանդույթներ ունեցող կառույցում: Գալա համերգն իր տեսակով տարբերվող կլինի:

Բացի մրցանակային հորիզոնականներ զբաղեցրած մասնակիցներից, ելույթ կունենան նաեւ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը, ՀՀ ժողովրդական արտիստ Մարտին Վարդազարյանը, Միրզոյանական առաջին մրցույթի հաղթող Ալեքսանդր Հարությունյանը, ինչպես նաեւ Տավուշի թեմի «ՏաԼույս» մանկապատանեկան երգչախումբը: Մուտքն ազատ է:

Մրցույթն իրականացնում է Հայաստանի կոմպոզիտորների միությունը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

«ՇՔԵՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԺ. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ ՀՈՒՆԱՍՏԱՆ»

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից ArmLur.am-ին հայտնեցին, որ պաշտոնական այցով Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում գտնվող ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը եւ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն այցելել են Բրիտանական թանգարան եւ դիտել «Շքեղություն եւ ուժ. Պարսկաստանից Հունաստան» խորագրով ցուցահանդեսը, հանդիպել թանգարանի տնօրեն Հարթվիգ Ֆիշերի հետ:

Բրիտանական թանգարանում բացված «Շքեղություն եւ ուժ. Պարսկաստանից Հունաստան» խորագրով ցուցահանդեսում ներկայացված են բացառիկ ցուցանմուշներ Հայաստանի պատմության թանգարանից եւ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանից: Ցուցադրությունը բացվել է մայիսի 4-ին եւ գործելու է մինչեւ օգոստոսի 13-ը:

Ցուցահանդեսը Ք. ա. VI-I դդ. Աքեմենյան կայսրությունից մինչ հելլենիստական ժամանակների շքեղության, իշխանական խորհրդանիշների, դրանց փոխակերպումների, ինչպես նաեւ քաղաքական ու պատմամշակութային նշանակության մասին է:

Միացյալ Թագավորությունում առաջին անգամ ցուցադրվում են Արմավիրից գտնված ոսկյա կրծքազարդը, կավե ցլակերպ ծիսանոթը (Ք.ա. VI-V դդ.), Էրեբունից հայտնաբերված արծաթյա հեծյալի ծիսանոթը (Ք.ա. VI-IV դդ.), Արտաշատից գտնված կավե արջակերպ ծիսանոթը (Ք.ա. I դ.): Այցելուների հատուկ խմբի համար կազմակերպված փակ դիտումների ժամանակ հատկապես ուշադրության է արժանացել Հայաստանի պատմության թանգարանից տրամադրված արջակերպ ծիսանոթը, որը մեկ ցուցափեղկում է համադրված Բրիտանական թանգարանում պահվող համաժամանակյա մեկ այլ բարձրարժեք ցուցանմուշի՝ Անահիտ աստվածուհու կիսանդրու հետ: Այս ցուցանմուշներն իսկական բացահայտում են դարձել Բրիտանական թանգարանի մասնագետների համար:

Բրիտանական թանգարանի տնօրեն Հարթվիգ Ֆիշերի հետ հանդիպմանը քննարկվել են հայ-բրիտանական համատեղ ցուցադրությունների կազմակերպման հնարավորություններին առնչվող հարցեր: Անդրադարձ է եղել թանգարանների կառավարման խնդիրներին՝ մասնավորապես կարեւորելով ցուցադրությունների արդյունավետ կազմակերպման մոդելների ներդրումն ու զարգացումը, ինչպես նաեւ միջթանգարանային երկկողմ կապերի ամրապնդումը:

Հիշեցնենք, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը եւ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը Լոնդոն են մեկնել՝ մասնակցելու Կրթության համաշխարհային համաժողովին:

ԼՈՒՐԵՐ

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լոնդոնի «Չելսին» բանակցում է Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» հետ սենեգալցի հարձակվող Սադիո Մանեի տրանսֆերի հարցով, հաղորդում է ինսայդեր Պեդրո Ալմեյդան թվիթերյան էջում: Անգլիական ակումբն այժմ փավորիտն է Սադիո Մանեի տրանսֆերի համար պայքարում: «Բավարիայի» ղեկավարությունը դժգոհ է ֆուտբոլիստից, որը չկարողացավ հարմարվել նոր թիմում: Գերմանացի գլխավոր մարզիչ Թոմաս Տուխելը եւս տպավորված չէ Մանեի խաղից եւ դեմ չի լինի նրա վաճառքին: Մանեն անցած տարվա ամռանն է անգլիական «Լիվերպուլից» տեղափոխվել «Բավարիա»: Ընթացիկ մրցաշրջանում Մանեն մասնակցել է 36 հանդիպման, խփել է 12 գոլ, կատարել 5 գոլային փոխանցում: Transfermarkt-ը Մանեի տրանսֆերային արժեքը գնահատում է 45 միլիոն եվրո:

ՄԵՍԻԻ ԿԻՆԸ ԴԵՄ Է

Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի եւ Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի 35-ամյա հարձակվող Լիոնել Մեսիի կինը դեմ է Սաուդյան Արաբիա տեղափոխվելուն: «Ալ-Հիլալը» Մեսիին առաջարկել է 400 միլիոն եվրոյի պայմանագիր, սակայն Անտոնելա Ռոկուցոն չի ցանկանում երեք որդիների հետ ապրել օտար մշակույթում, հաղորդում է ֆրանսիական L'Equipe-ը: Մեսիի պայմանագիրը ՊՍԺ-ի հետ կավարտվի հունիսին: Նա ցանկանում է վերադառնալ «Բարսելոնա», սակայն ֆինանսական խնդիրներ ունեցող կատալոնական ակումբից պաշտոնական առաջարկ դեռ չի ստացել:

«100 ԳԱՂԱՓԱՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ»

Երկարաձգվել է «100 գաղափար՝ Հայաստանի համար» նորարարական նախագծերի եւ գիտատեխնիկական մշակումների համահայկական մրցույթի ճարտարապետություն անվանակարգում հայտերի ընդունման ժամկետը: Մրցույթի նպատակն է զարգացնել երիտասարդների նորարարական մտածողությունը, ներգրավել երիտասարդներին Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացներում, խթանել գիտատեխնիկական մշակումներն ու նորարարական նախագծեր իրականացնելու քաղաքացիական նախաձեռնությունները: Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի եւ սփյուռքի 16-35 տարեկան երիտասարդներ կամ հեղինակային խմբեր: Ճարտարապետություն անվանակարգում հայտերի ընդունման ժամկետը երկարաձգվել է մինչեւ 2023 թվականի մայիսի 18-ը ներառյալ: Հայտերն անհրաժեշտ է ուղարկել youth@escs.am էլեկտրոնային հասցեին՝ «Թեմա» բաժնում նշելով մրցույթին ներկայացվող գաղափարի անվանակարգը: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 010599642: Մրցույթին ներկայացված գաղափարներից մրցութային հանձնաժողովը կընտրի լավագույն գաղափար, որին կտրվի դրամական պարգեւ՝ 500.000-ական դրամի չափով: Մրցույթի հանձնաժողովը առավելությունը կտա այն գաղափարներին, որոնք կապահովեն՝

-նորարար եւ կիրառական նշանակություն,

-ներկայացված գաղափարի շարունակականություն,

-գաղափարը կունենա հանրային մասնակցության բաղադրիչ,

-կառաջարկեն միջգիտակարգային լուծումներ:

● *Մայիսի 11-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «Տեսիլք» համերգը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՜Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելու դեպքում որքան տուգանք է սահմանված:

Հրաչ Միքայելյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հ. Միքայելյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի համաձայն՝ հետագա արտահանման պարտավորությամբ ՀՀ ներմուծված ապրանքները եւ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելը կամ հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքները եւ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում ՀՀ չներմուծելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ խախտման օրվա դրությամբ այդ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 50 հազար դրամ:

Նույն խախտումը, որը զուգորդվել է ապրանքների կամ տրանսպորտային միջոցների օտարմամբ, առաջացնում է տուգանքի նշանակում՝ օտարված ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ սահմանված ժամկետում մաքսային մարմիններին ապրանքների եւ տրանսպորտային միջոցների վերաբերյալ մաքսային հայտարարագիր չներկայացնելը, ինչպես նաեւ մաքսային հսկողություն իրականացնելու համար ապրանքների եւ տրանսպորտային միջոցների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելը, անկախ գրավոր հայտարարագիր ներկայացնելուց, առաջացնում է տուգանքի նշանակում՝ 50,000 դրամի չափով:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ինչպես կարելի է ձեռք բերել կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարան կամ ոչ բնակելի տարածք:

Տիրուհի Հարությունյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերում բնակարան կամ ոչ բնակելի տարածք ձեռք բերելիս սեփականության իրավունքով ձեռք է բերվում հողամասի համապատասխան բաժնային մասը: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդված):

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը անձի՝ ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածությունում բնակվելու իրավունքն է: Հողամասի մասը կարող է օտարվել առանց նախօրոք առանձնացվելու: Դրա համար օտարման պայմանագրին, որպես դրա անբաժանելի մաս, պետք է կցված լինի հողամասի օտարող մասի հատակագիծը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Արցախում

Հայտնաբերվել է Կարմիր գրքում գրանցված վիրավոր լորաճուռակ:

«Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Երեւանի Ֆուչիկի փողոցի թիվ 21 շենքի մոտակայքում նկատվում է վիրավոր թռչուն:

Պարզվել է, որ հայտնաբերված թռչունը վիրավոր լորաճուռակ է (գրացված է ՀՀ կարմիր գրքում):

Փրկարարները բռնել են թռչունին եւ տեղափոխել Երեւանի Կենդանաբանական այգի»,- ասված է հաղորդագրության մեջ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 2 + 2 +14 + 18
	Կոտայքի լեռներ	- 2 + 2 +13 + 16
	Կոտայքի նախալեռներ	+ 5 + 7 +18 + 20
	Գեղարքունիք	0 + 4 +13 + 18
	Լոռի	+ 2 + 6 +12 + 18
	Տավուշ	+ 3 + 8 +20 + 24
	Արագածոտնի լեռներ	- 1 + 3 +13 + 16
	Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 8 +18 + 23

	Արարատ	+ 7 + 10 +24 + 26
	Արմավիր	+ 6 + 8 +24 + 26
	Վայոց ձորի լեռներ	- 1 + 2 +14 + 16
	Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 5 +19 + 23
	Սյունիքի հովիտներ	+ 8 + 11 +23 + 28
	Սյունիքի նախալեռներ	+ 3 + 6 +17 + 20
	Արցախ	+ 7 + 11 +20 + 25
	Երեւան	+ 7 + 9 +21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **9.5.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*